# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 41 - 42 (16130) ՇԱԲԱԹ, 1 ՀՈՒՆԻՍԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ


МАЙИСИ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

## ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԵՎ ՄՅՈՒՍ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

### ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ՝ Ի ՊԱՏԻՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ

***Մայիսի 26-ին Վրաստանի անկախության օրվան առնչված տոնական միջոցառումներ կայացան Թբիլիսիում եւ երկրի 26 քաղաքներում:***



Տոնական միջոցառումներն սկսվեցին ժամը 12-ին եւ շարունակվեցին մինչեւ 21.30-ը:

Թբիլիսիում տոնի էպիկենտրոններն էին Ռուսթավելու պողոտան, Ազատության հրապարակը, Գլդանին եւ Վարկեթիլին:

Վարդերի հեղափոխության հրապարակում եւ Ազատության հրապարակում ներկայացվեց ռազմական տեխնիկա:

Նախկին ԻՄԷԼ-ի շենքի առջեւ ցուցադրվեց Վրաստանի ՆԳ նախարարության տեխնիկան:

Ռուսթավելու պողոտայում կազմակերպվեցին նաեւ ցուցահանդեսներ եւ համերգներ:

Ազատության հրապարակում ռազմական ակադեմիայի շրջանավարտները եր-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐԸ ՆՇԵՑ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ



***Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին երկրի Անկախության օրը դիմավորել է Աֆղանստանի Գելմանդ բնակավայրում:***

Միխեիլ Սաակաշվիլին շնորհավորել է ISAF-ի (Միջազգային անվտանգության աջակցության ուժեր) առաքելությունում վրացի զինծառայողներին: Նա պարգեւատրել է յոթ զինծառայողի: Ավելի ուշ, Վրաստանի նախագահը հանդիպել է ISAF-ի «Հարավ-Արեւմուտք» տարածաշրջանային հրամանատարության ղեկավար, գեներալ-մայոր Վոլտեր Միլլերի հետ «Լեզերնիկ» ռազմական բազայում:

Միլլերը կրկին իր ցավակցությունն է հայտնել ռազմաբազայում խռովարարների հարձակման հետեւանքով վրացի զինվորների մահվան կապակցությամբ եւ նշել, որ ամերիկյան կողմը գնահատում է Վրաստանի ներդրումը ISAF առաքելությունում: Հանդիպմանը քննակվել են նաեւ առաքելության շրջանակում իրականացվող գործողություններին վերաբերող հարցեր:

Վրացական կողմից հանդիպմանը մասնակցել է նաեւ պատգամավոր Գիորգի Բարամիձեն, Աֆղանստանում Վրաստանի ռազմական ուժերի բարձրագույն ներկայացուցիչ, գնդապետ Ալեքսանդր Կիկնաձեն:

КՐԹԱԿԱՆ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ՓՈԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլու նախաձեռնությամբ, մատաղ սերնդի դաստիարակության գործում ներդրած նշանակալի ավանդի նշանավորման համար, սահմանվել է «Երախտավորի» («ამაგდარი») կրծքանշան:***

Նոր կրծքանշանը կոչված է արժանվույն գնահատել կրթության համակարգի աշխատողների ներդրած ավանդը, խրախուսել ու աջակցել ուսումնական գործընթացի կատարելագործման ու արդյունավետության բարձրացմանն ուղղված նոր նախագծերի, նախաձեռնությունների առաջադրումը:

Նոր հաստատված առաջին կրծքանշանը մայիսի 30-ին Գիորգի Մարգվելաշվիլին հանձնեց Նինոծմինդայի շրջանի Փոկա գյուղի հայկական հանրային դպրոցի վրաց լեզվի ուսուցչուհի Կլարա Փոցխվերաշվիլուն:



Կլարա Փոցխվերաշվիլին 90-ական թվականներին Թբիլիսիից տեղափոխվեց Նինոծմինդայի շրջան, որտեղ ներգրավվեց կրթության նախարարության վրաց լեզվի ու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

## ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ

***Մայիսի 28-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը, Հայաստանի ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, պաշտոնատար այլ անձինք Հանրապետության տոնի առթիվ այցելեցին Սարդարապատի հուշահամալիր՝ մասնակցելու 1918 թվականի հերոսամարտին նվիրված հանդիսավոր միջոցառմանը:***



Արարողության ավարտին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը եւ Վեհափառ Հայրապետը ծաղկեպսակ են դրել Սարդարապատի հուշահամալիրում, որից հետո Նորին Սրբությունն աղոթք է բարձրացրել առ Աստված՝ Մայիսյան հերոսամարտերում զոհված քաջարի հայորդիների հոգիների հանգստության համար:

Սարդարապատի հուշահամալիրում Հանրապետության օրվա առթիվ անցկացվեց զինվորական շքերթ:

Տոնի առթիվ անցկացվեցին նաեւ մշակութային տարբեր միջոցառումներ:

## ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱԶՆ ՉԱՐԼԶԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

***Մայիսի 28-29-ին, «Երեւան, իմ սեր» բարեգործական հիմնադրամի հրավերով, Հայաստանում էր գտնվում Միացյալ Թագավորության արքայազն Չարլզը:***



Մայիսի 29-ին կայացավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը Միացյալ Թագավորության արքայազնի հետ:

Սերժ Սարգսյանը ողջունել է արքայազնին Հայաստանում՝ ընդգծելով, որ հայ-բրիտանական հարաբերությունները երկար դարերի պատմություն ունեն, եւ հայ ժողովուրդը ջերմորեն է վերաբերվում բրիտանացի ժողովրդին ու արքայական ընտանիքին: Հայաստանի նախագահը խնդրել է իր ողջույններն ու բարեմաղթանքները փոխանցել Նորին Մեծություն թագուհի Եղիսաբեթ Երկրորդին:

Սերժ Սարգսյանը նշել է, որ հաճելի զգացումներ եւ հիշողություններ է պահպանել 2010թ. Լոնդոնում Նորին Մեծության եւ արքայազնի հետ հանդիպումներից: Արքայազն Չարլզը շնորհակալություն է հայտնել ջերմ հյուրընկալության, իսկ «Երեւան, իմ սեր» հիմնադրամի տնօրեն Արմեն Սարգսյանին՝ հրավերի համար:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## Բ.ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻ ԲԱՆՈՎ ՉԻ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆԻՑ»

***Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հանդիպում ունեցավ դիվանագիտական առաքելությունների միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:***

Հանդիպմանը նա հայտարարեց. «Մեր կառավարությունը ոչ մի բանով չի տարբերվում եվրոպականից»: Նա այսպես մեկնաբանեց ընդդիմախոսների հետ քաղաքական հաշվեհարդար տեսնելու մասին

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

## ԳԱՐԻԿ ԿԱՐԱՄՅԱՆԸ՝ «ՍՈՒՐԲ ԳԻՈՐԳԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԱՍՊԵՏ



Մայիսի 27-ին, Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին Հավլաբարի նախագահական նստավայրում, Վրաստանի զինված ուժերի ներկայացուցիչների հետ անցկացված հանդիպմանը ցուցաբերած արիության համար, «Սուրբ Գիորգիի» հաղթանակի շքանշանով պարգեւատրեց վրաց բանակի սպաներ Գարիկ Կարամյանին, Բեսիկ Մժավանաձեին եւ Մալխազ Ծիքորիձեին:

32-ամյա, ծնունդով թեթրիծղարոցի, ներկայումս Թբիլիսիի բնակիչ Գարիկ Կարամյանն արդեն 15 տարի է, ինչ ծառայում է վրացական բանակում, ներկայումս ունի մայորի զինվորական աստիճան:

***«Վրաստան» թերթը շնորհավորում է Գարիկ Կարամյանին շքանշանի առթիվ եւ մաղթում նորանոր հաջողություններ:***

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# Բ.ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՉ ՄԻ ԲԱՆՈՎ ՉԻ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆԻՑ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ազգային շարժման ղեկավարների հայտարարությունները:

Իվանիշվիլին դեսպաններին վստահեցրեց, որ ապագայում մայիսի 17-ի իրադարձությունների կրկնության հավականությունը չնչին է: Ըստ վարչապետի խոսքերի, եկեղեցին մտադիր է պատժել այն անձանց, ովքեր հասարակայնությանը կոչեցին ագրեսիայի եւ բռնության:

«Մեր հասարակայնությունը մեծապես հանդուրժողական է բոլոր փոքրամասնությունների նկատմամբ, սակայն սեքսուալ փոքրամասնությունը, կրոնական եւ այլ տիպի փոքրամասնությունների համեմատությամբ, համեմատաբար նոր երեւույթ է Վրաստանի համար, եւ հասարակայնության մեծ մասը չի ցանկանում ընդունել այն»,- նշեց Իվանիշվիլին՝ հավելելով, որ այդ դիրքորոշման արտահայտությունը նորմալ է, սակայն ոչ այնպես, ինչպես դա տեղի ունեցավ մայիսի 17-ին:

«Անթույլատրելի է, որպեսզի մեծամասնությունը դիմի բռնության: Իշխանությունները պարտավոր են կանխել եւ բոլորին ընձեռել իր կարծիքը հայտնելու հնարավորություն: Կարծում եմ, որ մենք կիանգենք ճիշտ եզրակացությունների, եւ ապագայում իշխանությունները համեմատաբար ավելի լավ պատրաստված կլինեն»,- ասաց վարչապետը:



Վարչապետն անդրադարձավ նաեւ տեղի ունեցածի կապակցությամբ Պատրիարքարանի արձագանքին: Նա հավաստիացրեց, որ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելություններին քիչ է հետաքրքրում Մերաբիշվիլու ձերբակալությունը: Հանդիպման ժամանակ, Մերաբիշվիլու ձերբակալման կապակցությամբ, վարչապետին հարց տրվեց միայն մեկ անգամ:

Դեսպանների հետ հանդիպմանը վարչապետը հայտարարեց. «Նախագահը անձեռնմխելի չէ եւ, եթե դատախազության մոտ ծագեն հարցեր, իսկ այդ առնչությամբ կասկածներ արդեն կան, ապա մեծ է հավանականությունը, որ նրան էլ կհարցաքննեն»: Նա հավելեց, որ Գերմանիայի նախագահի կապակցությամբ արդեն մեկ տարուց ավելի է, որ կատարվում է հետաքննություն, եւ նա հեռացավ պաշտոնից:

Իվանիշվիլին անդրադարձ կատարեց Միխեիլ Սաակաշվիլու այն հայտարարությանը, թե Մերաբիշվիլու ձերբակալմամբ Վրաստանի կառավարությունը դատում է երկրի նորագույն պատմությունը: «Եթե նա կարծում է, որ Վրաստանի նորագույն պատմությունը սահմանափակվում է իր գործունեության ժամանակամիջոցով, ապա դա նորմալ է, քանի որ նա, ով խախտել է օրենքը, պետք է պատասխան տա»,- հայտարարեց Իվանիշվիլին:

ԿՐԹԱԿԱՆ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵՑ ՓՈԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ժեղացված դասավանդում նախատեսող նախագծին: Նա մինչ օրս Փոկա գյուղի հայկական հանրային դպրոցում վրաց լեզու է դասավանդում եւ ակտիվորեն ներգրավված է դպրոցի կյանքում: Նրա աշակերտները մասնակցում են երկրի տարբեր մրցույթների եւ միջոցառումների, վրացերենով ներկայացումներ են բեմադրում: Վրաստանի բուհերի ուսանողներ դարձած Փոկայի դպրոցի շրջանավարտները Կլարա Փոցխվերաշվիլու աշակերտներն են:

Պարգեւատրման արարողությանը ներկա էին Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, վարչության նախագահ Գագիկ Ղարսլյանը, Նինոծմինդայի հանրակրթական ռեսուրսկենտրոնի տնօրեն Անի Մոսոյանը:

Առաջին փուլում «Երախտավորի» կրծքանշանով պարգեւատրվել է Վրաստանի տարբեր հանրային դպրոցների եւս ութ մանկավարժ:



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎՐԱՆԵՍԹԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԷՐ ՆԱԵՎ ՀԵՆԶԵԼ ՄԿՈՅԱՆԸ



*Մայիսի 29-ին ամփոփվել է Բրյուսելում երկու օր տեւած Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի երրորդ նստաշրջանը, որին մասնակցում էին Արեւելյան գործընկերության հինգ պետությունների խորհրդարանների պատվիրակությունները, այդ թվում նաեւ Վրաստանի պատվիրակությունը՝ Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի կոմիտեի փոխնախագահ Վիկտոր Դոլիձեի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Նինոծմինդայից մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, ֆինանսա-բյուջետային կոմիտեի նախագահ Դավիթ Օնոփրիշվիլին, մարդու իրավունքների կոմիտեի նախագահ Էկա Բեսելիան, ագրարային կոմիտեի նախագահ Գիգլա Ագուլաշվիլին, պատգամավորներ Գիա Ժորժոլիանին, Թինաթին Խիդաշելին, Գուգուլի Մաղրաձեն, Դավիթ Դարչիաշվիլին, Գիորգի Մելաձեն, Զուրաբ Անջափարիձեն:*

Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովն ընդունել է Եվրոպական միության եւ Արեւելյան գործընկերներ՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի պարտականությունները սահմանող համընդհանուր զեկույց, որով կողմերը պարտավորվում են «խաղաղություն ու անվտանգություն խթանել ողջ Եվրոպայում»:

Վեհաժողովում մասնավորապես քննարկվել են տարածաշրջանային անվտանգության, ԵՄ-ի հետ էներգետիկ եւ առեւտրային համագործակցության, սոցիալական խնդիրներին վերաբերող կարեւորագույն հարցեր: Արդյունքում, Եվրանեսթը խիստ ուղերձ է հղել պետությունների ղեկավարներին եւ կառավարություններին՝ իրենց պարտավորությունների ու քաղաքացիների ձգտումների պատշաճ կատարման վերաբերյալ:

Վեհաժողովը՝ որպես գլխավոր մտահոգություն, սահմանել է Հարավային Կովկասում անվտանգությունը եւ օրենքի գերակայությունը: Վեհաժողովը նաեւ կոչ է արել Եվրամիությանը՝ ավելացնել Արեւելյան գործընկերության երկրներին հատկացվող ֆինանսական աջակցությունը: ԵՄ ընթացիկ բազմամյա ֆինանսական ծրագրի քաղաքական համաձայնագիրը նախատեսում է 13,7 միլիարդ եվրո հատկացնել ԵՄ հարեւանության գործիքների համար:

Եվրանեսթի հաջորդ վեհաժողովը տեղի կունենա Երեւանում, 2014 թվականի նոյեմբերին:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

# ԳԱԳԻԿ ՂԱՐՍԼՅԱՆԸ՝ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյում կայացած կադրային փոփոխություններից հետո, մունիցիպալիտետի վարչության նախագահի պաշտոնը թափուր էր: Դրա համար հայտարարվել էր մրցույթ:*



Մայիսի 24-ին սակրեբուլոն իր նիստում քննարկեց վարչության նախագահի հավակնորդների դիմումները եւ վարչության նախագահի պաշտոնում հաստատեց 47-ամյա Գագիկ Ղարսլյանին, որը, մինչ այդ, զբաղեցնում էր Նինոծմինդայի մունիցիպալիտետի անշարժ գույքի գրանցման ծառայության պետի պաշտոնը:

Գագիկ Ղարսլյանը ծնվել է Նինոծմինդայի շրջանի Խոջաբեկ գյուղում: Ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիայի ֆակուլտետը: Բուհն ավարտելուց հետո, աշխատել է հարազատ գյուղի կոլտնտեսությունում: Ապա՝ որպես շրջանի գլխավոր հողաշինարար, աշխատել է հողային վարչության պետի տեղակալ, հողի օգտագործման եւ պաշտպանության պետական տեսուչ:

Ամուսնացած է, ունի երկու զավակ:



## ԵՄ

### ԶԵՆՔԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԷՄԲԱՐԳՈՆ ՉԻ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ

*Եվրամիության անդամ 27 երկրների արտգործնախարարները մայիսի 28-ին որոշել են չերկարաձգել սիրիական ապստամբներին զենք մատակարարելու էմբարգոն, որն ավարտվում է հունիսի 1-ին: Նրանք պայմանավորվել են, որ զենք կարելի է մատակարարել «միայն Սիրիայի հեղափոխական եւ ընդդիմադիր ուժերի ազգային կոալիցիային բացառապես քաղաքացիական բնակչության պաշտպանության նպատակներով»: Եվրամիության ամփոփիչ որոշման մեջ նշված է, որ ԵՄ անդամ երկրները 12 ամսով երկարաձգել են Սիրիայի դեմ բոլոր տնտեսական, առեւտրային եւ վիզային պատժամիջոցները:*

## ՍԵՐԲԻԱ

### ՆՈՐՄԱԼԱՑՎՈՒՄ ԵՆ ԿՈՍՈՎՈՅԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Սերբիայի կառավարությունը մայիսի 26-ի արտահերթ նիստում հաստատել է Կոսովոյի հետ հարաբերությունների նորմալացման մասին Բրյուսելի համաձայնագրի կատարման ծրագիրը: Այդ որոշման ընդունման մասին Սերբիայի նախարարների կաբինետի ղեկավար Իվիցա Դաչիչը անհապաղ տեղեկացրել է Եվրամիության դիվանագիտության ղեկավար Քեթրին Էշթոնին: Այդ պայմանագրի իրագործման հետ կապված հիմնախնդրի լուծումը հանգուցային նշանակություն ունի Սերբիայի համար, քանի որ առանց դրա չի նշանակվի Եվրամիությանը երկրի անդամագրվելու շուրջ բանակցությունների սկսման ժամկետը:*

*Մինչդեռ, Սերբիայի քաղաքական կուսակցություններից ու շարժումներից շատերը, ինչպես նաեւ Կոսովոյի սերբերն ու Սերբիայի ուղղափառ եկեղեցին, դեմ են Կոսովոյի հետ համաձայնագրին:*

## ՖՐԱՆՍԻԱ

### ՄԻԱՍԵՌ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴՆԵՐԻ ԱԿՑԻԱ

*Մայիսի 26-ին Փարիզում զանգվածային գործողություն է տեղի ունեցել այն օրենքի դեմ, որը միասեռ զույգերին թույլ է տալիս կնքել ամուսնություններ եւ որդեգրել երեխաներ: Ըստ ոստիկանության տվյալների, «Ցույց բոլորի համար» ակցիային մասնակցել է 150 հազար, կազմակերպիչների տվյալների համաձայն՝ ավելի քան 1 միլիոն մարդ: Հանրահավաքն ավարտվելուն պես, 200-300 հոգուց բաղկացած մի խումբ սկսել է հրահրել ոստիկանությանը: Խուլիգաններին կանգնեցնելու եւ հրապարակից մարդկանց դուրս մղելու համար, ոստիկանությունը կիրառել է արցունքաբեր գազ: Ինչպես հաղորդել է գործակալությունը, 293 մարդ ձերբակալվել է, նրանցից 231-ը կալանքի տակ է առնվել:*

*Օրենքը, որը միասեռ զույգերին թույլ է տալիս ամուսնանալ եւ որդեգրել երեխաներ, մայիսի 18-ին ստորագրել է Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը: Այդ նույն օրը հրապարակվել է երկրի պաշտոնական տպագիր օրգանում:*

## ԿՈՐԵԱ

### ՍԵՈՒԼԸ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԲԱՆԱԿՑԵԼՈՒՑ

*Հարավային Կորեան մայիսի 27-ին մերժել է Կորեական թերակղզու միջուկային հիմնախնդրի շուրջ վեցակողմ բանակցությունները վերսկսելու Փհենյանի առաջարկությունը: «Գործերը շատ ավելի կարեւոր են խոսքերից»,- հայտարարել է Հարավային Կորեայի միավորման գործերի նախարարության ներկայացուցիչը: Նա լրագրողներին հայտարարել է. «Եթե Հյուսիսն իրոք ցանկանում է երկխոսություն, ապա առաջին քայլը պետք է դառնա Քեսոնի արդյունաբերական գոտու հարցի շուրջ կառավարական մակարդակով աշխատանքային բանակցություններ վարելու վերաբերյալ մեր առաջարկներին դրական պատասխան տալը»:*

*Ինչպես հաղորդվել է, ավելի վաղ, Փհենյանը որոշում է ընդունել դադարեցնել իր տարածքում Քեսոնի արդյունաբերական գոտու՝ Հարավի հետ համատեղ աշխատանքը՝ ձեռնարկություններից հանելով հյուսիսկորեացի աշխատողներին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

## «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

### ՆԱԽԱԳԱՀԸ ՍՏՈՐԱԳՐԵՑ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

*Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին ստորագրել է «Պաշտպանության ռազմավարական տեսություն-2013-2016» փաստաթուղթը, որը սահմանում է Վրաստանի պաշտպանության նախարարության եւ զինված ուժերի զարգացման ռազմավարությունը մինչեւ 2016 թվականը ներառյալ:*

Փաստաթղթում նշված ուղղությունների նպատակն է բարձրացնել զինված ուժերի հնարավորությունները եւ դրանք մոտեցնել ՆԱՏՕ-ի ստանդարտներին: Փաստաթղթի համաձայն, ՆԱՏՕ ընդունվելը Վրաստանի արտաքին քաղաքականության եւ անվտանգության քաղաքականության գլխավոր առաջնությունն է:

Նախագահը հաստատել է նաեւ կիբերանվտանգության ռազմավարության իրականացման 2013-2015 թվականների համար գործողությունների պլանը:

Ինչպես հաղորդել են Անվտանգության խորհրդի աշխատակազմից, Վրաստանի կիբերանվտանգության ռազմավարությունը հիմնական փաստաթուղթն է անվտանգության ոլորտում պետական քաղաքականություն սահմանելու ուղղությամբ: Տվյալ ռազմավարության նպատակն է իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ երկրում պետական մարմինների, մասնավոր հատվածի եւ քաղաքացիական հասարակայնության պաշտպանված գործունեությունը ապահովելու համար:

ՕՐԻՆԱԳԾԵՐ

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՀԱՂԹԱՀԱՐԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԵՏՈՆԵՐԸ

*Մայիսի 30-ին Վրաստանի խորհրդարանը հաղթահարեց նախագահի վետոները երկու օրինագծերի կապակցությամբ: Դրանցից մեկը վերաբերում է Սահմանադրական դատարանի մասին օրենքում կատարվելիք փոփոխությանը, որը սահմանափակում է նորմատիվ ակտի գործողության դադարեցման ժամկետները, իսկ երկրորդը՝ պետական համալսարանների իրավաբանական կարգավիճակի հնարավոր փոփոխմանը:*



Այդ որոշումների արդյունքում, ուժի մեջ մնացին ապրիլի 19-ին խորհրդարանի ընդունած օրենսդրական փոփոխությունները: Դրանց համաձայն, եթե Սահմանադրական դատարանը որոշի դադարեցնել վիճելի ակտի գործողությունն այն պատճառով, որ նրա գործողությունը կարող է անուղղելի վնաս հասցնել կողմերից մեկին, ապա նա պարտավոր կլինի 30 օրվա ընթացքում ընդունել որոշում տվյալ հայցին վերաբերող գործի մասին:

Այսօր գործող կանոնների համաձայն, Սահմանադրական դատարանում գործերը վարելու ժամկետները եւ, համապատասխանորեն, վիճելի ակտիվ գործողության դադարեցման ժամկետները կարող են երկարացվել առավելագույնս մինչեւ 11 ամիս:

Երկրորդ օրինագիծը, որի նկատմամբ նախագահը վետոյի իրավունքից օգտվեց մայիսի 10-ին, վերաբերում է ոչ ձեռնարկատիրական (ոչ կոմերցիոն) իրավաբանական անձանց հնարավոր վերափոխմանը՝ որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ:

Խորհրդարանի ընդունած օրինագծում կոնկրետորեն չի նշված, որ այդ փոփոխությունները վերաբերում են բուհերին, սակայն իշխանությունները եւ ընդդիմությունը հայտարարում են, որ կրթության նախարարության նախապատրաստած այդ փոփոխությունների թիրախը հանդիսանում են հենց պետական բուհերը:

Խորհրդարանը այս դիտողությունները նույնպես հաշվի չառավ եւ ուժի մեջ թողեց ապրիլի 19-ին ընդունված օրենսդրական փոփոխությունները:

Գոյություն ունեցող ընթացակարգի համաձայն, եթե նախագահը վերստին վետո դնի այդ օրինագծերի վրա, որոնց կապակցությամբ հաղթահարվել է նրա վետոն, այդ դեպքում դրանք կստորագրի խորհրդարանի նախագահը, եւ արդյունքում՝ օրենքները կկիրարկվեն:

ՄԻՋԱԴԵՊ՝ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄՈՏ

## ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ ԵՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ

*Թբիլիսիի քաղաքային դատարանը Գելա Մամալաձեին եւ Նիկոլոզ Արաբուլուն դատապարտել է պայմանական կալանքի՝ մեկ տարի 8 ամիս ժամանակով:*

Նրանք ֆիզիկական վիրավորանք էին հասցրել Միասնական ազգային շարժում կուսակցությունից պատգամավորներ Չիորա Թաքթաքիշվիլուն եւ Սերգո Ռատիանուն՝ ազգային գրադարանի շենքի մոտ տեղ գտած միջադեպի ժամանակ: Այս մասին հաղորդել է «Ռուսթավի-2» հեռուստաընկերությունը:

Հեռուստաընկերության տվյալներով, Մամալաձեի եւ Արաբուլու փաստաբանները պահանջում էին նշանակել տուգանք, սակայն դատարանը չբավարարեց նրանց միջնորդությունը:

Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի շենքի մոտ, ուր պլանավորվում էր նախագահ Միխեիլ Սաակաշվիլու ելույթը, փետրվարի 8-ին տեղի ունեցավ ակցիա, որը կազմակերպել էին կալանքից քաղբանտարկյալների ցուցակով ազատված անձինք:

Ակցիայի ընթացքում տեղի ունեցավ ընդհարում, որի արդյունքում տուժեցին մի քանի մարդ, այդ թվում՝ նախկին կառավարող կուսակցությունից խորհրդարանի պատգամավորներ եւ Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան:

Սույն միջադեպի կապակցությամբ, խուլիգանության մեջ մեղադրվել եւ ձերբակալվել էր չորս հոգի, որից երկուսը՝ Մելոր Վաչնաձեն եւ Միխեիլ Մեսխին ազատ էին արձակվել՝ 100 լարի տուգանք վճարելուց հետո:

ՍԱՀՄԱՆԱԳԻԾ

## ԼԱՐԱՓԱԿՈՑՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆԱԳԾԻՑ 300 ՄԵՏՐ ԽՈՐԱՑՄԱՄԲ

*Վրաստանի հետ Հարավային Օսեթիայի սահմանում ռուսաստանյան զինծառայողների սահմանագծման աշխատանքների արդյունքում, սահմանագիծը 300 մետրով խորացվել է վրացական իշխանությունների կողմից վերահսկվող տարածքում:*



Վրաստանի ՆԳ նախարարությունը փշալարերի անցկացումը հայտարարել է ապօրինի եւ խոստացել, որ այդ հարցը կբարձրացվի այսպես կոչված «Ժնեւյան բանավեճերում»:

Վրացական կողմը Շվեյցարիայի դեսպանության միջոցով հայտագիր է ուղարկել Ռուսաստանին վրաց-օսեթական հակամարտության գոտում փշալարեր անցկացնելու կապակցությամբ: Այս մասին հաղորդել է **Վրաստանի ԱԳՆ ղեկավար Մայա Փանջիկիձեն**: Նախարարը հայտարարել է, որ ռուսական սահմանապահները փշալարեր են անցկացրել Վրաստանի Ցխինվալիի տարածաշրջանին սահմանակից Գորիի շրջանի Դիցի գյուղի եւ Քարելիի շրջանի Դվանի գյուղի մոտ:

**Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ժան-Կլոդ Մենյոնը,** մեկնաբանել է զինագրավված տարածքում ռուսական սահմանապահների կողմից գծի ինքնակամ փոխադրումը եւ հայտարարել, որ նման տիպի հիմնախնդիրների լուծման առումով Եվրախորհուրդը առաջնությունը տալիս է բանակցություններին:

**Եվրամիությունը** մտահոգված է Վրաստանում «սահմանների անցկացման» կապակցությամբ: Այս մասին ասվում է ԵՄ հայտարարության մեջ, որը հրապարակվեց Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի հաշվետվությունից հետո, ինչը վերաբերում էր Վրաստանում առկա հակամարտություններին:

Եվրամիությունը վերստին հավաստում է հաստատուն պաշտպանություն Վրաստանի անկախությանը, ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը՝ միջազգայնորեն ճանաչված սահմաններում:

Ռուսական օկուպացիոն ուժերի կողմից փշալարերի տեղադրմանը արձագանքել է **Եվրահանձնակատար Շտեֆան Ֆուլեն**: Նա մեկ անգամ եւս Ռուսաստանին կոչ է արել կատարել պարտավորությունները: Ֆուլեն ասել է, որ ԵԽ դիտարկող առաքելությունը հետեւում է իրավիճակին եւ կուսումնասիրի այն:

### ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՅԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՅՍ ՈՒՆԵԻ»

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Prime Time-ին տված հարցազրույցում նշել է, որ հույս ուներ Վրաստանի նոր իշխանությունների եւ Ռուսաստանի միջեւ այլ հարաբերություններ տեսնել: Վարչապետն այս հայտարարությունն արել է՝ մեկնաբանելով իրավիճակը Ցխինվալիի սահմանային գծում տարածքի շրջափակման հետ կապված:

«Այն, ինչ հիմա տեղի է ունենում, անհասկանալի է, քանի որ ես հույս ունեի, որ Ռուսաստանի եւ Վրաստանի նոր իշխանությունների միջեւ այլ հարաբերություններ կհաստատվեն: Մենք փորձում ենք դիվանագիտական ճանապարհով հարթել իրավիճակը եւ ոչ թե պատերազմական գործողությունների միջոցով»,- հայտարարել է վարչապետը:



### ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ

*Խորհրդարանի իրավաբանական կոմիտեի նախագահ Վախթանգ Խմալաձեն հայտարարել է, որ Վրաստանի Սահմանադրության մեջ կարող է կատարվել փոփոխություններ, որոնք երկքաղաքացիություն ունեցողներին հնարավորություն կտան զբաղեցնել երեք բարձրագույն պետական պաշտոններ:*

*Խորհրդարանի փոխխոսնակ Զվիադ Ձիձիգուրին նշել է, որ խորհրդարանը պատրաստում է սահմանադրական ուղղումներ երկքաղաքացիության հարցի առնչությամբ, եւ հավելել է, որ կարճ ժամանակամիջոցում խորհրդարան կներկայացվի սահմանադրական ուղղումների օրինագիծ:*

### ՇԱԼՎԱ ՓԻՓԻԱՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐ

*Վրաստանի գյուղատնտեսության նախարար է նշանակվել այդ գերատեսչության ղեկավարի պաշտոնակատար Շալվա Փիփիան:*

*Այս մասին Բիձինա Իվանիշվիլին հայտարարել է «Ջորջիան թայմս»-ին տված հարցազրույցում: Նոր նախարար նշանակելու կապակցությամբ, վարչապետը հայտարարել է. «Կարծում եմ, որ մենք լավ որոշում ընդունեցինք»:*

### ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՉԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԻ

*Կրթության նախարար Գիորգի Մարգվելաշվիլու հայտարարության համաձայն, ուսանողական զբաղվածության ծրագիրը, որն իրականացրեց երկրի նախորդ ղեկավարությունը, եղել է քաղաքական բովանդակությամբ նախընտրական ակցիա: Նախարարը նշել է, որ այժմ գերատեսչությունը բյուջետային միջոցները բաշխել է ավելի լավագույն ձեւով՝ այն տրամադրելով մանկավարժների աշխատավարձի, անվճար դասագրքերի, անվճար ֆակուլտետների եւ ենթակառուցվածքի զարգացման համար: «Անցյալ տարի իրականացված զբաղվածության ծրագիրը միանվագ էր եւ կրում էր քաղաքական բնույթ: Այդ ծրագիրն արդյունքներ չտվեց: Մեր առաջնային աշխատանքների կատարումը անհամեմատ ավելի կարեւոր է նախընտրական ակցիաներ անցկացնելուց»,- նշել է Մարգվելաշվիլին:*

### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՎՃԻՌ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

*Թբիլիսիի քաղաքային դատարանը սպորտի նախկին նախարար Լադո Վարձելաշվիլու նկատմամբ ընդունել է վճիռ՝ նրան պայմանականորեն դատապարտելով մեկուկես տարվա բանտարկության: Դատավորը նաեւ նրան պարտավորեցրել է 2000 լարի տուգանք՝ վճարել:*

### ԱՌԳՐԱՎՎԵԼ ԵՆ ՀՐԱԶԵՆ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔՆԵՐ

*Ախալքալաքիի շրջանային ոստիկանության աշխատակիցները, օպերատիվ-քննչական միջոցառումների արդյունքում, ձերբակալել են Ախալքալաքիի շրջանի Արագվա գյուղում բնակվող Սերյոժա Թ.-ին, ծնված 1953 թվականին: Նա մեղադրվում է հրազեն եւ զինամթերքներ ապօրինի կերպով ձեռք բերելու եւ պահելու մեջ: Ինչպես հաղորդել են ՆԳ նախարարությունից, ձերբակալվածի տանը խուզարկության ժամանակ հայտնաբերվել են «АК» սիստեմի ավտոմատ, 393 մարտական փամփուշտ: Հետաքննությունն իրականացվում է քրեական օրենսգրքի 236-րդ հոդվածի առաջին մասով:*

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

# ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ԵՎ ՄՅՈՒՍ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դում տվեցին, հենց այստեղ էլ ելույթ ունեցավ զինվորական նվագախումբը:

Գլդանիի զբոսայգում ներկայացվեց ռազմական եւ ոստիկանական տեխնիկա, կայացան մարզական մրցումներ եւ համերգ: Նույնանման միջոցառումներ իրականացվեցին Վարկեթիլիում:

* * *

Վրաստանի Անկախության օրվա առթիվ



վարչապետ Բիձինա Իվանիշվիլին եւ նրա կինը «Բազալեթի» տուրիստական համալիրում կազմակերպեցին ընդունելություն:

Ընդունելությանը հրավիրվել էին Վրաստանի Պատրիարքը, կառավարության եւ խորհրդարանի, դիվանագիտական առաքելությունների անդամները եւ հասարակայնության ներկայացուցիչները:

Ելույթ ունենալով՝ Բիձինա Իվանիշվիլին նշեց Մայիսի 26-ի նշանակությունը, պատմեց երկրում կատարված փոփոխությունների եւ ապագա պլանների մասին:

«Մենք ցանկանում ենք ստեղծել մի պետություն, որտեղ հարգում ենք ուրիշի կարծիքը, ուր տեղ չեն ունենա այլատեցություն եւ հոմոատեցություն, որտեղ հարգում են մարդու ընտրանքը, որտեղ բիզնեսն ազատ է: Մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի մեր կողմը թեքենք մեր աբխազ եւ օս եղբայրներին»,- ասաց վարչապետը:

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ

Վրաստանի պետական Անկախության վերականգնման օրը՝ Մայիսի 26-ը, տոնականորեն նշվեց Ախալքալաքիում: Քաղաքի Սուրբ Խաչ հայկական եկեղեցում մատուցվեց երկրի անկախության եւ տարածքային ամբողջականության համար զոհվածների հիշատակին նվիրված պատարագ՝ հայերենով եւ վրացերենով:

Ապա Ախալքալաքիի կենտրոնական հրապարակում ծավալվեցին տոնական միջոցառումները: Անցկացվեցին շախմատի եւ ֆուտբոլի մրցաշարեր, «Ապագայի տանը», քաղաքի գրադարանում, գավառագիտական թանգարանում կազմակերպվեցին ցուցահանդեսներ:

Ախալքալաքիի մշակույթի տանը տեղի տիկնիկային թատրոնն ու Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնը ցուցադրեցին բեմականացված ներկայացումներ: Տեղի համույթների ուժերով անցկացվեց տոնական համերգ:

Տոնական միջոցառումներին ներկա էին Ախալքալաքիի սակրեբուլոյի նախագահ Համլետ Մովսիսյանը, վարչության նախագահ Նաիրի Իրիցյանը, պատգամավորներ, հյուրեր:

## ՆԻՆՈԾՄԻՆԴԱ

Վրաստանի պետական Անկախության օրվան նվիրված միջոցառումներ անցկացվեցին նաեւ Նինոծմինդայում:

Տոնի առթիվ տեղի երաժշտական դպրոցի սաների եւ համույթների ուժերով տրվեց համերգ: Քաղաքի հանրակրթական տարբեր հաստատություններում բացվեցին ցուցահանդեսներ, անցկացվեցին թեմատիկ զրույցներ:

Հանդիսություններին մասնակցում էին Նինոծմինդայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, վարչության նախագահ Գագիկ Ղարսլյանը, տեղի սակրեբուլոյի պատգամավորներ, հյուրեր:

* * *

Ավելացնենք, որ Վրաստանի կառավարության որոշմամբ տոնական միջոցառումներ անցկացվեցին նաեւ Վրաստանի 26 քաղաքներում, այդ թվում՝ Բաթումիում, Բորժոմիում, Ախալցիխեում, Ծալկայում, Քութայիսիում եւ այլ քաղաքներում:

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Վրաստանի պետական տոնի՝ Պետական անկախության վերականգնման օրվա առթիվ շնորհավորանքի ուղերձ է հղել Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն եւ վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն:*

* * *

*Վրաստանի Անկախության օրվա նախօրեին Միացյալ Նահանգների պետքարտուղար Ջոն Քերրին ուղերձով դիմեց վրաց ժողովրդին՝ մաղթելով լավագույն ցանկություններ եւ հղելով շնորհավորանքներ:*

*«Մեր երկրների միջեւ կազմավորվել են գործընկերության սերտ հարաբերություններ՝ կառուցված ընդհանուր արժեքների եւ փոխադարձ շահերի հուսալի հիման վրա: Մենք լրիվությամբ պաշտպանում ենք Վրաստանի տարածքային ամբողջականությունը եւ ինքնիշխանությունը՝ միջազգային հանրության կողմից ճանաչված սահմաններում»,- մասնավորապես ասվում է ուղերձում:*

ՔՐԵԱԿԱՆ

# ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ ՎԱՆՈ ՄԵՐԱԲԻՇՎԻԼՈՒՆ

***Քութայիսիի վճռաբեկ դատարանը Վրաստանի նախկին վարչապետ, Միասնական ազգային շարժման գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլուն թողել է կալանքի մեջ:***

Ինչպես հաղորդել են գերագույն դատարանի մամլո ծառայությունից, վճռաբեկ դատարանը քննարկեց Մերաբիշվիլու փաստաբանների բողոքարկման հայցը եւ ուժի մեջ թողեց քաղաքային դատարանի որոշումը:

Փաստաբանները պահանջում էին անվավեր համարել Քութայիսիի քաղաքային դատարանի որոշումը, որով Վանո Մերաբիշվիլու համար՝ որպես խափանման միջոց, ընտրվել է երկամսյա նախնական կալանք:

Վանո Մերաբիշվիլին մեղադրվում է աշխատանքի տեղավորման ծրագրի շրջանակներում, կուսակցության գործունեությունը գաղտնի կերպով ֆինանսավորելու նպատակով, կոռուպցիոն սխեմա ստեղծելու մեջ:

Վրաստանի գլխավոր դատախազությունը խստացրել է մեղադրանքը Վրաստանի նախկին վարչապետ, Միասնական ազգային շարժման գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլու նկատմամբ 2011 թվականի մայիսի 26-ի ակցիան ցրելու կապակցությամբ: Նա մեղադրվում է լիազորությունները չարաշահելու մեջ: Հետաքննությունը պնդում է, որ նախարարը մշակել էր պլան, որով նախատեսված էր ոչ թե հանրահավաքը ցրելու, այլ ակցիայի մասնակիցներին պատժելու համար:

Թբիլիսիի քաղաքային դատարանը հինգշաբթի մեկ անգամ եւս Վրաստանի նախկին վարչապետի համար՝ որպես խափանման միջոց, ընտրեց երկամսյա բանտարկություն: Այս անգամ խափանման միջոցը Վանո Մերաբիշվիլու համար ընտրվել է երկու տարի առաջ ընդդիմության ակցիան ցրելու մասին գործի կապակցությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԿԵՆՍԱԿԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՔԱՆ՞Վ Է 125 ԼԱՐԻԱՆՈՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՎԱՂՎԱ ՕՐ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, ընթացիկ տարվա ապրիլի մեկից կենսաթոշակի չափը բոլոր կենսաթոշակառուների համար հավասարեցվեց, եւ այն կազմում է 125 լարի: եթե 125 լարի կենսաթոշակ մինչ այդ ստանում էին 67 տարեկանից բարձր կենսաթոշակառուները, ապա հիմա նման դասակարգումը վերացվեց: Ելնելով պաշտոնական հավաստումներից՝ արդեն սեպտեմբերի մեկից տարիքային կենսաթոշակը հասցվելու է 150 լարիի:***

Ինչ խոսք, տարիքային կենսաթոշակը 125 լարիի հասցնելը դրական միտում է, թեպետ տրամաբանական հարց է ծագում, միայնակ, այլ եկամուտ չունեցող կենսաթոշակառուին, կենսական նվազագույնի ավելացման պայմաններում, որքան ժամանակ կարող է բավարարել 125 լարին: Տարրական թվաբանական հաշվումները ցույց են տալիս, որ կենսաթոշակը լավագույն դեպքում կարող է բավարարել 18 օր:

Փորձենք միասին հաշվել. ուրեմն այսպես, գոյությունը պահպանելու համար կենսաթոշակառուն առօրյա պարտադիր կարգով կերաբաժնում պետք է ունենա հաց, շաքար եւ յուղ: Առօրյա պարտադիր մեկ հացի համար կենսաթոշակառուն ամսական վճարում է 18 լարի: Ամսական միջին հաշվով յուրաքանչյուր մարդու անհրաժեշտ է 2 շիշ ձեթ, որի գինը տատանվում է 3,5-ից 4 լարիի սահմաններում, այսինքն՝ յուղի հարցի կարգավորման համար կենսաթոշակառուն առնվազն ծախսելու է 7 լարի: Ինչ վերաբերում է շաքարին, ապա շաբաթական մեկ մարդու հաշվով պահանջվում է մեկ կիլոգրամ շաքար, ուստի ստացվում է, որ ամսական միայն շաքար գնելու համար պահանջվում է 6 լարի: Այսպիսով, շարքային կենսաթոշակառուին ամսական միայն հացի, ձեթի (յուղի) եւ շաքարի համար պահանջվում է առնվազն 21 լարի:

Բնականաբար, նորմալ գոյության համար առանձնակի նշանակություն ունեն հատիկայինները՝ բրինձ, հնդկացորեն, նաեւ մակարոնեղեն: Մի խոսքով, նման պարենի գնման համար, կենսաթոշակառուին ամսական առնվազն պետք է 15 լարի:

Ինչպես հայտնի է, տարեց մարդկանց խորհուրդ է տրվում պարտադիր կարգով օգտագործել կարագը, իսկ այն գնելու եւ առօրյա թեկուզ նվազագույն չափերով կերաբաժնում ունենալու համար, կենսաթոշակառուն վճարելու է մոտ 8 լարի:



Այժմ՝ կարտոֆիլի մասին: Կարծում եմ, մեզանում դժվար է գտնել թեկուզ մի մարդ, որը ամսական չօգտագործի 8-10 կիլոգրամ կարտոֆիլ: Հաշվի առնելով ներկայիս շուկայական գները՝ կարող ենք վստահությամբ ասել, որ օսլա պարունակող այդ կարեւորագույն սննդամթերքի գնման համար ամսական կպահանջվի առնվազն 6 լարի:

Այն, որ յուրաքանչյուր մարդու կերաբաժնում բանջարեղենի եւ մրգի առկայությանը տրվում է բացառիկ նշանակություն, ակնհայտ փաստ է, ուստիեւ կենսաթոշակառուներին եւս դա անհրաժեշտություն է: Առօրյա կերաբաժնում կաղամբ, սոխ, գազար, ճակնդեղ, կանաչեղեն ունենալու համար կենսաթոշակառուները վճարում են առնվազն 15 լարի: Եվս 15 լարի հարկ է առանձնացնել տարբեր տեսակի մրգերի գնման համար:

Այժմ օրգանիզմի համար այդքան կարեւորություն ունեցող սպիտակուցների ամենահարուստ աղբյուրի՝ մսի մասին: Նույնիսկ ամենախնայողական օգտագործման դեպքում, կենսաթոշակառուներին ամսական անհրաժեշտ է 2 կիլոգրամ միս: Իսկ դա նշանակում է կենսաթոշակից ծախսել եւս 25 լարի:

Վերոնշյալը ոչ լրիվ թվարկմամբ վերաբերում էր միայն սնվելուն: Իսկ հիմա յուրաքանչյուր կենսաթոշակառուի աքիլլեսյան գարշապարի՝ տարբեր տեսակի հիվանդությունների մասին: Նույնիսկ ամենահամեստ հաշվումներով, յուրաքանչյուր կենսաթոշակառու ամսական դեղորայքի գնման համար ծախսում է առնվազն 20 լարի: Այդ գումարին հարկ է ավելացնել նաեւ անձնական հիգիենայի միջոցների համար ամենամսյա ծախսվող շուրջ 10 լարին:

Հիմա կոմունալ հարկերի մասին: Էլեկտրական հոսանքի, բնական գազի, խմելու ջրի, նաեւ աղբի դուրսբերման համար կենսաթոշակառուների վճարումները մեծապես կախված են տարվա եղանակից: Եթե ձմռանը դրանց հանրագումարային արժեքը միջին հաշվով հասնում է 60-70 լարիի, ապա ամռանը, զգալիորեն պակաս է՝ շուրջ 20-30 լարի:

Հիմա փորձենք հանրագումարել վերոնշյալը: Արդյունքում ստացվում է, որ շարքային կենսաթոշակառուն (առանձնապես՝ քաղաքում ապրողները) նորմալ գոյությունը պահպանելու համար ամսական ծախսելու է 180-200 լարի: Այսպիսով, ներկայիս 125 եւ առաջիկայում նախատեսված 150 լարիի կենսաթոշակն անգամ բավարար չէ կենսաթոշակառուի երաշխավորված վաղվա ապահոգրման համար:

Ո՞րն է ելքը: Ամենայն հավանականությամբ, կենսաթոշակառուների երաշխավորված վաղվա օրվա ապահովագրման անհրաժեշտ է նախ ստույգորեն սահմանել կենսական նվազագույնը, ապա կենսաթոշակի մեծությունը հասցնել այդ նվազագույնի չափին: Ընդսմին, կենսական նվազագույնը սահմանելիս՝ հարկ է ելնել իրական, շուկայական գներից եւ ոչ թե ցանկալին ընդունել որպես իրողություն: Տվյալ պարագայում, ինչ-ինչ նկատառումներից ծագող որոշումները ընդունելի չեն:

Ուրախալի է, որ ներկայիս կառավարությունը, իր նախընտրական խոստումների կատարման ուղղությամբ իրականացվող ոչ այնքան վստահ, սակայն դրան միտված քայլերին զուգընթաց ձեռնամուխ է եղել կենսական նվազագույնի իրատեսական մշակման աշխատանքներին: Դրա արդյունքները, ըստ երեւույթին, հայտնի կդառնան ընթացիկ տարվա վերջին:

Սակայն կենսական նվազագույնի, թեկուզ իրատեսական մեծության սահմանումը դեռ բավական չէ կենսաթոշակառուների եւ կենսաթոշակների հետ կապված հիմնախնդրի կարգավորման համար: Տվյալ հանգամանքներում, առանձնակի նշանակություն է ստանում կենսական նվազագույնի եւ կենսաթոշակի չափի համապատասխանության մասին օրենսդրական բազայի հիմնումը, օրենսդրություն, որը նախատեսելու է ինչպես կենսական նվազագույնի պարբերական հաշվարկում, այնպես էլ՝ դրա մեծությանը կենսաթոշակի համապատասխանեցում: Միայն դրանից հետո հնարավոր կլինի խոսել, որ հնարավորինս արվում է կենսաթոշակառուների ապահովում վաղվա համար:

***ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ***